սակարգին, նորա քսակը միշտ բաց կը լինի բարի բաների համար։

«Բայց այդպիսի մի զօրեղ ազգ, որ վստահ է իւր կաշու և քսակի վերայ, ինչո՞ւ ղէնքը ձեռքում չէ պահանջում իւր իրաւունքը։ Ի՞նչու ողորմութիւն է հայցում։ Եւրոպական տէրութեանց վրա յոյս դնելու համար ևս դարձեալ ոյժ է հարկաւոր։ Իմ կարծեօքս, ասում էր խանը, նա միայն իւրաւունք ունի յոյս դնել օտար ոյժի վերայ, երբ ինքն էլ ոյժ ունի։ Փոխատվութեան դրամագլուխը հաւատում են ոչ թէ անձնաւորութեան, այլ նորա ստացուածքին կարողութեան։ Ի՞նչ խելք է քաղաքականութեան մէջ գթութիւն փնտռել։ Ինչտեղ շահերի ընդհանուր մրցնում կայ, այնտեղ գթութիւն չը կայ և գթութեան առարկան ոտի տակ տրորվում է։ Վաթսուն տարին անցրել եմ ասում էր Հիւսէյն աղէն, իմ ժամանակամիջոցում շատ փոփոխութիւններ եմ տեսել աշխարհի երեսին։ Շատ աղնիւ և մարդասիրական անունների տակ կատարվել են սարսափելի արիւնհեղութիւններ և յափշտակութիւններ ստացուածքի, հողի։ Ինչտեղ ուժի գերակշռութիւն կայ, այնտեղ անիրաւութիւնը իրաւունք է դառնում, յանցանք, ոճրագործութիւններ—առաքինական պարտքեր։ Հայերը իւրեանց յոյսը պիտի դնէին գլխաւորապէս իւրեանց վերայ և հետե-